ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Անահիտ Թարխանյան

Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսության Մատենադարանի թվայնացման աշխատանքների ղեկավար

Հարգելի բարեկամներ,

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Մատենադարանը գալ տարի կնշէ իր 85 ամեակը: Այսօր Մատենադարանում աշխատում է 2 հոգի, Տիրայր արք. Փանոսեանի գլխաւորութեամ, որոնք սպասարկում են 100,000-ից աւելի հայերէն, անգլերէն, ֆրանսերէն, արաբերէն, հայագիտական եւ այլ լեզուներով ֆոնդերը: Մատենադարանի Հնատիպների բաժնում պահպանվում են 3000-ից աւելի գիրք, մոտ 2000-ը հայերէն, 1000-ը օտարալեզու, մամուլի բաժինն ունի ճոխ հավաքացու, որն որ կարելի է ասել ամենահարուստն է Միջին Արեւելքում:

Պետք է ասեմ, որ անցյալ տարվա հոկտեմբեր ամսին, ես մասնակցեցի «Վարպետաց դասերին» Հայաստանի Ազգային Գրադարանում, ուր ծանոթացա թուայնացման հիմունքներին, ինչպէս նաեւ պրակտիկորէն մասնակցեցի համակարգչային բաժնի թուայնացման աշխատանքներին: Օգտվելով առիթից, կուզենայի իմ խորհին շնորհակալութիւնները հայտնել Հայաստանի Ազգային գրադարանի տնօրէն՝ պարոն Տիգրան Զարգարեանին եւ համակարգչային բաժնի նախկին վարիչ՝ տիկին Նունե Սամվելեանին, որոնք ջանք եւ եռանդ չխնայեցին դասընթացը բարձր մակարդակով անցկացնելու գործում:

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Մատենադարանը, անցյալ տարի, Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Լոս Անճելէսի թեմից նուէր ստացաւ ATIZ BOOK DRIVE թուայնացման մեքենա: Իսկ այս տարի մայիսին՝ նաեւ ստացանք համապատասխան ծրագիր: Ուստի կարելի դարձաւ լիովին աշխատացնել համակարգը:

Նախ, թուայնացրեցինք Ազգային Գրադարանի կողմից պատվիրված 2 հնատիպ գիրք, որոնք որ պահպանւում էին մեր հնատիպների բաժնում եւ որոնց օրինակները չկային Հայաստանում: Դա՝ ԱԿՆ ՀՈԳԵԿԱՆՆ է, տպուած 1683 թուականին, Մարսէյլում եւ 1703 թուականին Կոնստանդնապոլսում տպուած՝ Շարակնոցն է: Թուայնաուած գրքերը այսօր փոխանցված են

Ազգային Գրադարանին եւ համապատասխան մշակումից հետո, կդրվեն առցանց կայքէջի վրա:

Ապա թուայնացրեցինք մամուլի մի քանի նմուշներ, որոնք որ նաեւ հազվադէպ են: Այստեղ պետք է նշեմ, որ մեր Մատենադարանում պահպանվող մամուլի հատորները, ինչպէս նաեւ որոշ հնատիպ գրքեր, կազմուել են միասին՝ մեկ հատորով: Ուստի մեկ հատորի մեջ կազմուել են թերթերի տարբեր տարիների թիւեր եւ նույնիսկ տարբեր թերթեր, որոնց ֆիզիկական չափը նույնն է եղել: Օրինակ՝ Մասիս թերթի մեկ հատորի մեջ կարելի է հանդիպել 1871, ապա 1864, 1868 եւ այլն: Նույնն է պատկերը նաեւ հնատիպների բաժնում:

Նշեմ, որ թուայնացման ժամանակ, մենք կազմել եմ բոլոր հատորների ինդեքսները-լինքերը, որպեսզի ընթերցողը հեշտութեամբ կարողանա կողմնորոշվել եւ գտնել իր ուզած ամսաթվի թերթը եւ համարը:

Այս տարի, մենք որոշեցինք առանձնացնել միասին կարված հնատիպները: Այդ աշխատանքների ժամանակ, ի հայտ եկան 100-ից աւելի նոր գրքեր, 1800-1865 թվականին տպուած, որոնց ցանկը մենք ուղարկել ենք Հայաստանի Ազգային Գրադարան՝ համեմատման համար:

Ահա այսքանը մեր Մատենադարանի նորաստեղծ թուայնացման բաժնի աշխատանքների մասին:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Կաթողիկոսի նախաձեռնութեամբ Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը նախաձեռնեց Արեւմտեան Հայաստանի եւ Կիլիկիոյ յուշամատեանների վերահրատարակութիւնը, որ շուրջ 60 հատոր պետք է լինի, «Ցեղասպանութեան 100 ամեակի» առիթով:

Այդ շարքում, այսօր իսկ արդեն, լույս են տեսել 7 հատորներ՝

1. Ատանայի Հայոց Պատմութիւն
2. Պատմութիւն Տարօնի Աշխարհի
3. Պատմութիւն Այնթէպի Հայոց Ա. Եւ Բ. Հատորները
4. Յիշատակարան Ատանայի Աղէտի Ա., Բ. Եւ Գ. Հատորները
5. Հաճընի Ընդհանուր Պատմութիւն
6. Դիւցազնական Ուրֆան եւ իր Հայորդիները
7. Պատմագիրք Կիւրինի

Հրատարակութեան են պատրաստվում՝ Հակոբ Չոլաքեանի «Քեսաբի Պատմութիւնը», որն որ պիտի ընդգրկէ՝ նաեւ վերջին օրերի զարգացումները: Ապա՝ Արաբկիրի, Մարաշի, Մալաթիոյ, Խարբերդի եւ այլ Պատմագրքեր:

Միայն 2014 թուականին ծրագրուած է 4 հաստափոր հատորների հրատարակումը: Նշեմ, որ շարքի խմբագիրն է՝ պարոն Ժիրայր Դանիէլեանը:

Այս շարքից անկախ, արժե նաեւ հիշել, «Կիլիկիոյ (Ադանայի) եղեռնի 100 ամեակին» նուիրուած Կաթողիկոսարանի Մատենաշարէն լոյս ընծայուած «Կիլիկոյ Աղէտը» խորագրեալ 3 հատորները, որոնք նմանապէս տպուած են այս առիթով: Այս շարքի խմբագիրն է պարոն Սարգիս Կիրակոսեանը: